# 235 տարի Ռուսաստանի երկնքի տակ

235 տարի առաջ, 1779 թվականին տեղի ունեցավ Ղրիմից հայերի գաղթը և Դոնի երկրամասում հաստատվելը: Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդի Հրովարտակով հայերին բնակատեղ հատկացվեց Դոն գետի աջ ափին, Դմիտրի Ռոստովսկու ամրոցի մոտակայքում: Հիմնադրվեցին Նախիջևան (վերանվանված՝ Նոր Նախիջևան) քաղաքը, Չալթր, Թոփթի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նիսվիթա (Նեսվետայ) գյուղերը: Նոր տեղում հայերը բնակարաններ ու եկեղեցիներ կառուցեցին, անմշակ տափաստանը ծաղկուն այգեստան դարձրին և բարձր բերք ստացան, կրթության ու մշակույթի օջախներ բացեցին:

Նշելով արտադրական, սոցիալ-տնտեսական, մշակույթի, կրթության, առողջապահության և այլ բնագավառներում ձեռք բերված հաջողությունները, պետք է շեշտել, որ առաջընթացը իրականացվել է հայերի աշխատասիրությամբ և այն բանի շնորհիվ, որ նրանց համար Ռուսաստանի բարեբեր հողում ստեղծվել են եղբայր ռուս ժողովրդի հետ միասին, ձեռք-ձեռքի տված աշխատելու, ստեղծագործելու և բարգավաճելու բոլոր պայմանները: Եվ Ռուսաստանը, հիրավի, հայերի համար դարձել է երկրորդ հայրենիք, խաղաղության պահպանման, աշխատանքի և կյանքի ապահովման հուսալի պատվար:



*Նկարում՝ կայսրուհի Եկատերինա Երկրորդի հրովարտակը:*

## Լույսեր մշակույթի օջախներից



Չալթրի շրջանային պատմա-ազգագրական թանգարանում հարուստ նյութեր են հավաքված Ղրիմից հայերի գաղթի և Դոնի հողում հաստատվելու վերաբերյալ: Բազմաթիվ են մարդկանց աշխատանքը, ապրելակերպը և կենցաղը բնութագրող իրերը, լուսանկարներն ու կանավան փաստաթղթերը: Եվ ցուցանմուշների քանակը գնալով ավելանում է, իսկ թանգարանի աշխատողները մեծ հաճույքով էքսկուրսիաներ են կազմակերպում այցելուների համար:

* * *

Շրջանային կենտրոնական գրադարանի աշխատողներն էլ այս տարի կազմակերպել և անցկացրել են "Հարուստ է տաղանդներով մեր երկրամասը" հոբելյանական ստեղծագործական մրցույթ, որին մասնակցել են 84 հոգի: Այդ թվում "Ժողովրդական ստեղծագործության շքերթ" մրցույթին իրենց գործերը ներկայացրել են 65 հոգի:

Գրադարանում բացված է նաև մյասնիկյանցի ստեղծագործողների գրքերի ցուցահանդես: Եվ գրադարանավարուհիները ոչ միայն բարձր մակարդակով սպասարկում են մշտական ընթերցողներին, որոնց թիվը անցնում է 2000-ից, այլև մեծ սիրով պատասխանում են ցուցահանդեսների այցելուներին հետաքրքրող տարբեր տեսակի բազմաթիվ հարցերին:




*Նկարում՝ կենտրոնական գրադարանի գրադարանավարուհիներ Մարիա Յավրույանը, Անահիտ Բարաշյանը, Կարինա Չուբարյանը, Մարիամ Արկումանյանը և Սաթենիկ Մեծ-Բայանը:*











*Լուսանկարները Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*